

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ ԵՒ ԳԻՏՈՒԹԻՒՆ

"Ամենայն Գիրք Աստուածաշունչի..."

Պողոս Բ. Թուղթ առ Տիմոթ. Գ-16

Սուրբ Գիրքն Աստուածաշունչ անուանումը ստացել է հայ իրականության մեջ եւ կիրարկուած է միայն հայոց եկեղեցում, այս կոչումը հիմնուած է առաքելի խօսքերի վրայ. "Բոլոր Գիրքն Աստուծոյ շունչն է ...": Սա նշանակում է, որ Ս. Գիրքը ներշնչուած է Աստուծոյ կողմից: Այն՝ գրքերի ներշնչեալ հաւաքածոյ է, նրա միջոցով Աստուած իրեն յայտնում է մարդկութեանը: Եւ Աստուածաշունչը ոչ միայն արդիւն է ներշնչումի այլ նաեւ աղբիւր է ներշնչման: Այն կենաց խօսքի շտեմարանն է, որտեղից սնոււմ է հոգին, լուսաւորուում միտքը: Նրա միջոցով ազնուացում է մարդու նկարագիրը:

Շատ եւրոպական լեզուներով Ս. Գիրքը կոչուում է Bible: Այս անուանումը գալիս է յունարէն Biblos՝ քառից, որ նշանակում է գիրք:

Աստուածաշունչն Աստուծոյ խօսքն է, նրա քերականից ելած: Սա հաստատում են, թէ՛ Ս. Գիրքը ինքն, թէ՛ Քրիստոսի եկեղեցին եւ թէ՛ տիեզերական սուրբ հայրերը: Նիկիական հանգամակը գեղեցիկ եւ յստակ կերպով յայտարարում է. "հաւատամք եւ ի Սուրբ Հոգին, յանգն եւ ի կատարեալն, որ խօսեցաւ յօրէնս եւ ի մարգարէս եւ յաւետարան": Հայոց ազգը դարերով հաստատուն մնաց այս դաւանանքի մէջ: Սակայն արդի ժամանակներում Ս. Գրքի բազմաթիւ "գիտական" քննադատութիւններ մոլորեցնում են շատերին: Այս պատճառով քրիստոնէական եկեղեցին ստիպուած է իր զօրաւոր ու համոզիչ ապացոյցները նորից քերելու, պաշտպանելու համար նշմարիտ

դաւանանքը: Աստուածաշնչի մասին հաւաստի գիտելիքներ ունենալը յոյժ կարեւոր է եւ արժան է, որ իւրաքանչիւր անհատ լուրջ խորհրդածութեան միջոցով, քան զի Աստուածաշունչ Մատեանը նախ եւ առաջ Աստուծոյ գոյութեան վկայարանն է հանդիսանում, ապա նաեւ նրա գործունէութեան վկայարանը:

Մեր ապրած ժամանակաշրջանը հակադրուելով նախորդ դարերի կրօնական ըմբռնումներին, բնականաբար քննադատական ոգի է ցուցաբերում նաեւ քրիստոնէական կրօնի նկատմամբ: Այս շրջանի ոգուն յատուկ է մարդապաշտութիւնը: Մարդը աշխատում է ազատագրուել ամէն տեսակի ենթակայութիւններից: Մարդկային մտքի եւ կամքի նուաճումները, լինեն գրականութեան, արուեստի, գիտութեան, թէ տեխնիկայի բնագաւառի օգտագործումն են, որպէս պայքարի միջոց Ս. Գրքի, քրիստոնէական եկեղեցու եւ ի վերջոյ՝ Աստուծոյ դէմ:

Կրօնի քննադատութիւնը սկսած 16 դարից իրականացուել է հիմնականում պատմական երեւի իրար յաջորդող ուղղութիւններով. Աստուածաշնչի եւ նշմարիտ Աստծոյ մերժումը՝ "Դէիզմ"ով, Աստուծոյ գոյութեան ուրացումը՝ "Աթէիզմ"ով, եւ Աստուծոյ մասին հարցումի արհամարհումը՝ "ԱԳՆՈՍՏԻՑԻզմ"ով:

Դէիզմը կրօնափիլիսոփայական տեսութիւն է: Այն ընդունում է Աստծոյ գաղափարը, բայց ժխտում է նրա եւ աշխարհի փոխարարքութիւնը, մասնաւորապէս մերժում է Աստուծոյ

ունեցած ներգործութիւնը աշխարհի զարգացման վրայ: Դէիզմը չի ընդունում քրիստոնէական կրօնի հիմնական առանցքը՝ այն ուրանում է Յիսուս քրիստոսին եւ նրա շնորհիւ կատարուած փրկագործութիւնը: Բնական է, որ ուրացում է եւ Ս. Գիրքը, իբրեւ ճշմարիտ Աստուծոյ խօսք: Սակայն պէտք է նշել, որ թէ՛ դէիզմը, թէ՛ այլ հակակրօնական, հակաքրիստոնէական տեսութիւնները ի գօրու չեղան սասանելու Սուրբ Գրային յաւիտեանական ճշմարտութիւնները: Պատմութեան ընթացքին բազմաթիւ մակնթացութիւնների եւ տեղատուութիւնների դիմագրաւուած Աստուածաշունչը մեր օրերին նոյնպէս մնում է իբրեւ անժխտելի գերբնական իրողութիւն: Այն մտայնութիւնը թէ բնական գիտութիւնների զարգացման հետեւանքով կրօնը տկարանալով կը մեռնի՝ ի դերեւ դուրս եկաւ:

Այսօր գիտութիւնը ոչ թէ ժխտում է այլ հաստատում է Աստուածաշնչեան ճշմարտութիւնները: Անշուշտ գիտութեամբ, տեխնիկայով թերեւս մարդը լուծում է արտաֆին աշխարհի հետ կապուած շատ խնդիրներ, բայց ինքն իր խնդիրը լուծել չի կարող, անլուծելին նրա ներաշխարհում է: Մարդու-բարդոյթը միայն գիտական միտքը անգործ է լուծելու: Մարդը փնտռում է իր կեանքի իմաստը: Նա փնտռում է Աստուծոյ: Աստուած որոնման ընթացքում մարդ արարածի ուղեկիցը Ս. Գիրքն է, իբրեւ Աստուծոյ կամքի ու բնութեան յայտնութիւն: Նաեւ միջոցներից մէկը Աստուծոյ եւ մարդու հաղորդակցուելու, խօսելու: Վերջում քերեմք մի բանի փաստարկումներ, որ Աստուածաշունչը Աստուծոյ խօսքն է:

1) Աստուածաշունչը ունի ինքն իր մասին վկայութիւններ. "Տէրը կ'ըսէ", "Տիրոջ խօսքը", "Այսպէս է ասում Տէրը, զօրաց Աստուածը", "Տէրը խօսեց եւ ասաց", եւ

նման ուրիշ արտայայտութիւններ 2500-ից անլի անգամներ գրուած են նրա մէջ:

2) Հին Կտակարանի մասին վկայեց Տէրը՝ Յիսուս Քրիստոս. "Կարելի չէ որ այն գրուածը անբուրի" եւ "երկինք ու երկիր կ'անցնեն, բայց իմ խօսքերը չեն անցնի":

3) Մեր առջեւ ունենք բազմաթիւ կատարուած մարգարէութիւնների վկայութիւնները: Վերջիններս կատարուեցին անցեալի մէջ, միւսները կատարուում են, այսօր եւ պիտի կատարուեն գալիք ժամանակներում: Իսկ ոչ ոք չէր կարող այդքան դարեւ առաջ կանխորոշել պատահելիքը, եթէ Ս. Հոգու ներշնչումը չունենար. չէ՞ որ մարգարէութիւնները տառ առ տառ կատարուեցին:

4) Չորրորդ վկայութիւնը Աստուածաշունչի գիտական ճշգրտութիւնը, գիտութեան եւ նրա փոխ համաձայնութիւնը: Այսօր փաստ է, որ իրական (Օբժեկտիւ) գիտութիւնը եւ Ս. Գիրքը կատարելապէս համաձայն են միմեանց:

5) Ս. Գիրքը իր մէջ հակասութիւններ չունի: Գրեթէ 40 անգամ, տարբեր պատմական ժամանակաշրջաններում ապրելով, լինելով ուսեալ եւ ոչ, պատկանելով տարբեր դասակարգերի գրել են Գիրք, որն իր մէջ ոչ մի հակասութիւն, անհամաձայնութիւն չի պարունակում, ընդհակառակը իւրաքանչիւրի գրուածք լրացնում է միւսներին ու բոլորը ի մի բերուելով կազմում են մէկ Գիրք: Դրանից հետեւում է, որ հեղինակների ներշնչման աղբիւրը մէկն է՝ Ս. Հոգին:

6) Ս. Գիրքը անկորնչելի է, անփոփոխելի է: Աշխարհում եւ ոչ մի գիրք Աստուածաշունչի չափ չի հալածուել ու այնքան մեծաթիւ հակառակորդներ չի ունեցել որքան այն: Բայց այսուհանդերձ Ս. Գիրքը մնացել է իր պատկառելի վեհափառութեամբ, մարտնչող եւ յաղթող: Աստուածաշունչը անփոփոխ քարգմանուած է 2000-ից անլի լեզուներով:

7) Աստուածաշունչը կենդանացնող է, նորոգող: Այս պարագան եւս ապացոյց է, որ Ս. Գիրքը մարդկային մտքով ստեղծագործուած չէ միայն, այլ յօրինուած է Սուրբ Հոգու անսխալ առաջնորդութեամբ: Բիւրաւոր մարդիկ տարուքերուդ մեղքի ալեկոծ ծովում, փրկութեան նանապարհն են գտել ու տակաւին գտնում են Աստուածաշունչի միջոցով: Քանզի Ս. Գիրքը տիեզերքի Արարչից եկած օրհնեալ խոստումներ ու պատգամները բերող գիրք է:

Ներկայացնենք մի քանի գիտական հետազոտութիւններ ուր գիտութիւնն ու Աստուածաշունչը հանդէս են գալիս միասնաբար, լրացնելով միմեանց: Մասնաւորապէս հետաքրքիր է մաթեմատիկական, թուաբանական գիտելիքների օգտագործումը, Աստուածաշունչի ուսումնասիրութեան, Աստուածաբանական հետազոտութիւնների մէջ:

Իւան Բենիմին Կապուտուլիւնները

Անուանի հրապարակախօս երրայերէնի, յունարէնի հմուտ լեզուագէտ Իւան Բենիմինը նկատել է, որ Ս. Գրքի բնագրերի մէջ, որ գրուած են վերը յիշուած լեզուներով, առկայ են հաշուային օրինաչափութիւններ: Գրուածքների մէջ բառերը, տառերը կապուած են որոշակի ծրագրով: Իւան Բենիմինը 50 տարի շարունակ աշխատեց այս նիւթի շուրջ, գրեց 40 հազար խոշոր էջեր եւ ի լոյս հանեց դարերից ի վեր պահուած զարմանալի փաստեր: Տարիներ առաջ Կարլ Կ. Սապիրս անունով Քրիստոնեայ ֆարոգիչ, մեծ թիւով գրքերի հեղինակ մանրամասնօրէն ֆննելով Բենիմինի գրուածքները "Էսթաունդինկ Նյու Դիսքըվրիզ" ("Հիացուցիչ Նոր Դիւտեր") վերնագրով մի գիրք հրատարակեց: "Նորել Ռիւըրչ Ֆաունդէյշն" հիմնարկութիւնը, որն հրապարակեց գիրքը, յայտնել է, որ հարիւր հազար օրինակ տպագրութիւնը

սպառուել է երեք ամիսների ընթացքում: Ալքերտ Նոքելը գրքի առաջաքանում գրում է. "Հետեւեալ էջերի մէջ պարզուած զարմանալի երեւոյթները՝ աստուածաբանների, գիտնականների, աշխարհականների խորհրդածութեան արժանի են: Նրանց ընդհանուր կարեւորութիւնը արժանի է բոլորի ուշադրութեանը: Հիւթը ճշգրտօրէն ներկայացուած է այստեղ, եւ ինչեւիցէ վախ չունի երկար ու մանրակրկիտ ֆննութիւններից ...":

Ցաւօք Հին եւ Նոր Կտակարանների բնագրերը մեր ձեռքի տակ չկան, որպէս զի օրինակները ակնառու լինեն, ինչեւիցէ կը բաւարարուենք ներկայացնելով Բենիմինի հետազոտութեան որոշ արդիւնքներ:

Աշխատանքը ներկայացնելուց առաջ աշխարհիկ ընթերցողին յիշեցնենք որոշ հիմնային փաստեր Ս. Գրքի մասին: Ս. Գիրքը հայոց եկեղեցու մէջ ունի նաեւ Աստուածաշունչ անունը, որը եզական (եունիկ) բառ է:

Այն կը կոչուի նաեւ Հին եւ Նոր Կտակարանք, կամ Հին եւ Նոր Ուխտի գրքեր, Ելից ԻԴ 7, Մատթ. ԻԶ 28: Հին Ուխտը Աստուծոյ եւ Հին Իսրայէլի միջեւ էր կնքուած, իսկ Նոր Ուխտը նրա նոր դաշինքն է մարդկութեան հետ Քրիստոսի միջոցով: Կին Կտակարանի բնագրերը երրայերէն լեզուով են գրուած, Նոր Կտակարանինը՝ յունարէն, անշուշտ սա չի նշանակում, թէ Ս. Գիրքը գրուած է միայն այս լեզուներով, խօսքը տուեալ դէպքում մեզ հասած բնագրերի մասին է միայն: Ըստ մեր բնագրի՝ Հին Կտակարանը պարունակում է 49 գիրք, նորը՝ 27:

Երրայերէն լեզուն ունի 22 գրքեր, իսկ յունարէնը՝ 24: Այս գրքերը գործածուած են նաեւ իբրեւ թուանշաններ, ինչպէս հայերէն լեզուի մէջ օրինակ՝ Ա-1, Բ-2, Գ-3, ԺԱ-11, Ժ-100, Ռ-1000 եւ այլն: Այդպէս եւ երրայերէնի եւ յունարէնի մէջ: Ներկայացնենք երրայերէն մի քանի

տառեր իբրեւ թուանշան՝ ձեռագիր/Է(ալեֆ) -1 2 -2 2 -3 3 -4 2 -5 1 -6 57 եւ այլն: Նման ձեռով ներկայացուում են յունարեն գրերը:

Յունարեն լեզուով Յիսուս բառը - գրերից է բաղկացած Իէտռւս, նրանց արժեքներն են 10, 8, 200, 70, 40, 200: Եթէ գումարենք այս թուերը կունենա՞մք՝ 888: Արդ յունարենի մէջ Յիսուս բառի թուական արժեքը 888 է, հետաքրքրական է, որ նեոի թուական արժեքն է 666, նիշտ այն ինչ գրուած է Յայտն. ԺԳ.18 մէջ: Իւրաքանչիւր եբրայերէն եւ յունարեն բառ, նախադասութիւն, ունեն նաեւ թուական արժեք: Երբ բառերի թուական արժեքները գումարենք, արդիւնքը կը ներկայացնի նախադասութեան թուական արժեքը: Օրինակ, Յովհ. ԺԱ.35 համարը հայերէն տեքստի մէջ 2 բառերից է բաղկացած - "Յիսուսը լացեց", յունարենը 3 բառերից է կազմուած "Էտաֆրիսեն օ Նիսուս": Այս 3 բառերի թուական արժեքների գումարը հաւասար է 1743 (785+70+888):

Ներկայացնենք բնագրերի մէջ Բենիմի գտած օրինաչափութիւնները եւ մաթեմատիկական հաշիւները մի քանի օրինակներով:

1) Ծննդոց Ա.1 համար "Սկզբում Աստուած երկինքն ու երկիրը ստեղծեց":

"Պրեշիթ(1) պարա(2) էլօհիմ(3) էյթ(4) հեշշամեյիմ(5) վեյթ(6) հասրեց(7)" (եբրայերէն): Եօթը բառից բաղկացած այս նախադասութեան մէջ կայ 3 գոյական՝ "Աստուած", "երկինք", "երկիր" որոնց թուական արժեքն է 777, որ է՝ 111x7: Այդ բառերը եբրայերէնով նիշտ 28 տառերով են կազմուած, որ է 4x7: Աստուած աշնջեան այս համարի մէջ եղած բայի ("ստեղծեց") թուական արժեքն է 203=29x7: Համարի 7 բառերից իւրաքանչիւրի առաջին եւ վերջին տառերի թուական արժեքի գումարն է 1393=199x7: Իսկ համարի առաջին եւ

վերջին բառերի վերջին գրերի թուական արժեքն է 490=70x7: Նոյն համարի բոլոր բառերի առաջին, վերջին եւ միջին գիրերի թուական արժեքն է 133=19x7, "Աստուած" "երկինք", "երկիր" բառերը (գոյականները) ունեն 14 գրեր, որ է 2x7: Կարելի է շարունակել 7 թուի այլ երեւոյթներ եւս, բայց բաւական համարելով դիտարկենք ուրիշ օրինակ:

2) Աւետարան ըստ Մատթէոսի Ա. 1-17 համարներում խօսուում է Քրիստոսի ազգաբանութեան մասին:

ա- Այստեղ՝ Ա. 1-17, բառերի թիւը 72 է, որոնց թուական արժեք է 42364=6052x7 բ- Յիշեալ 72 բառերը 90 ձեւերով են գրուած (եզակի, յոգնակի, ուղղական, սեռական եւ այլն): Վերջիններիս թուական արժեքն է 54075=7725x7

գ- Յիշեալ 72 բառերի մէջ 56ը գոյական է, որ է 8x7

դ- Նոյն հատուածի առաջին 11 համարների բառագիրքը կազմող բառերի թիւն է 49=7x7

ե- Այս 49 բառերի մէջ նրանք, որ ձայնաւորով են սկսուում 28 հատ են, որ 54x7

զ- 49 բառերի տառերի թիւն է 268=38x7 է - նշուած 266 յունարեն տառերի մէջ ձայնաւորների թիւն է 140=20x7, իսկ բաղաձայների թիւն է՝ 126=18x7

ը- Վերը յիշուած 49 բառերի մէջ նրանք, որ միայն մէկ անգամ են գրուած 14 հատ են 2x7, իսկ նրանք, որ մէկ անգամից աւելի են գրուած 35 են՝ 35=5x7

թ- Ա. 1-11 համարների մէջ 42 գոյականներ կան, որոնցից յատուկ անունները 35 են, 35=5x7, հասարակ անունները եօթն են: Ժ- 35 հատ յատուկ անունները 63 անգամ են յիշուած, որ է 9x7

ԺԱ- Սոյն 35 յատուկ անունների մէջ արական անձերի անունների թիւն է 28, որ է 4x7: Իսկ նրանք, որ արական անձերի անուններ չեն 7 հատ են:

ԺԲ- 28 հատ արական անձերի անունները յիշուած են 56 անգամ, որ է 8×7

ԺԳ- Այս 11 համարների մէջ յ կանանց անուններ կան՝ Թամար, Թախար, Հոուք: Նրանց անունների յունարէն տառերը նիշտ 14 հատ են՝ 2×7

ԺԴ- Համարների մէջ մի ֆաղափի անուն է յիշուում՝ Բաբելոն, որն ունի յունարէն տառ:

3) Մատթ. Ա. 18-25: Քրիստոսի ծննդեան պատմութիւնը:

ա- Հատուածի համարներում գտնուում են 161 յունարէն բառեր, որ է 23×7

բ- 161 բառերի թուական արժէքն է՝ 93394 որ է 13342×7

գ- Հատուածի բառագիրքը կազմող յունարէն բառերի թիւն է նիշտ $77 = 11 \times 7$

դ- Սոյն 77 բառերի թուական արժէքն է 51247 որ է 7321×7

ե- Այս հատուածի մէջ կան 6 բառեր, որոնք Մատթէոսի աւետարանի մէջ ուրիշ ոչ մի տեղ չեն գտնուում: Բառերի արժէքն է $5005 = 715 \times 7$

զ- Յիշեալ 6 բառերի տառերի թիւն է $56 = 8 \times 7$

է- Նոյն հատուածում հանդիպում է "էմմանուէլ" բառը, որ ուրիշ ոչ մի տեղ չի գտնուում Նոր Կտակարանի մէջ: Բառի թուական արժէքն է $644 = 92 \times 7$

ը- Վերագրեալ 161 բառերը 105 ձեւերով են հանդէս գալիս, որ է 15×7

թ- 105 ձեւերի մէջ բայերի թիւն է $35 = 5 \times 7$

ժ- Նոյն ձեւերի մէջ գտնուած յատուկ անունները 7 են:

ԺԱ- Յիշել 105 ձեւերի թուական արժէքն է 65429, որ է 9347×7

ԺԲ- Նշուած 7 յատուկ անունները ունեն 42 տառեր, 6×7

ԺԳ- Քերականական այն ձեւերը որ Մատթէոսի աւետարանի մէջ ուրիշ ոչ մի տեղ չեն գտնուում 14 են 2×7

ԺԴ- 14 ձեւերի թուական արժէքն է 8715, որ է 1245×7

ԺԵ- Այս հատուածի բառագիրքը կազմող 77 բառերի մէջ նրանք, որ հրեշտակը գործածեց Յովսէփի հետ խօսելիս 28 են, 4×7

ԺԶ- Հրեշտակի խօսած բոլոր բառերի թուական արժէքն է 21042, որ է 3006×7

ԺԷ- Հրեշտակի խօսած բառերի ձեւերի թիւն է $35 = 5 \times 7$

ԺԸ- Այս 35 ձեւերի տառերի թիւն է 168, որ է 24×7

ԺԹ- Հրեշտակի գործածած 35 ձեւերի թուական արժէքն է $19397 = 2771 \times 7$

Այս օրինակով վերջացնենք Իւան Բենիմի աշխատանքի նկարագրումը:

ՍԱՐԳԻՍ ՍԱՐԻԲԷԿԵԱՆ

(ՎԵՐՁ)

(Նախորդ թիւի «Խորհրդաբանական Թուաբանութիւն» յօդուածին)